

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ
ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաշվառման համար	Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
Group Rules 01#6	1	30/01/2026թ.	03/02/2026թ.

Հեղինակ՝

Ստորաբաժանում	Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Մանրաձախ պրոդյուկտների կառավարման վարչություն	Վարչության պետ	Էլիզա Հայրապետյան
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ	Գլխավոր տնօրենի տեղակալ	Սարգիս Սարգսյան

Հաստատող՝

Պաշտոն	Անուն Ազգանուն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն	Հակոբ Անդրեասյան
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ Գլխավոր տնօրեն	Աղասի Գասպարյան

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

1.1. ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ գործարար վարվելակերպի կանոնների (այսուհետ՝ Կանոններ) նպատակն է սահմանել ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ աշխատակիցների կողմից ծառայությունների (բանկային ավանդ, բանկային հաշիվ, կրեդիտ) մատուցման ընթացքում սպառողների հետ հաղորդակցման սկզբունքները, ինչպես նաև մինչ պայմանագրի կնքումը, պայմանագրի կնքման ժամանակ և դրա հետագա սպասարկման ընթացքում սպառողներին տրամադրվող տեղեկատվության ցանկը, տրամադրման ժամկետները, ձևերն ու կարգը:

1.2. Կանոններով սահմանված պահանջները տարածվում են.

- 1) Մինչև տասնհինգ միլիոն դրամ (ներառյալ) կրեդիտավորման պայմանագրերի վրա,
- 2) Բնակարանային հիպոտեկային կրեդիտների տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման, գովազդի, կրեդիտավորողի և կրեդիտառուի միջև հաղորդակցման կարգի վրա,
- 3) Մինչև հինգ միլիոն (ներառյալ) ՀՀ դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին և «գերփոքր» հանդիսացող առևտրային կազմակերպություններին տրամադրվող գյուղատնտեսական նշանակության կրեդիտավորման պայմանագրերի (Կրեդիտների) վրա: Սույն ենթակետի իմաստով գյուղատնտեսական նշանակության Կրեդիտներ են համարվում Բանկի կողմից տրամադրվող Գյուղատնտեսական վարկը, Գյուղատնտեսական վարկային գիծը և Լիզինգի կողմից տրամադրվող Գյուղատնտեսական լիզինգը:
- 4) Մինչև հինգ միլիոն (ներառյալ) ՀՀ դրամի չափով կամ դրան համարժեք արտարժույթով կրեդիտավորման պայմանագրերի (Կրեդիտների) վրա, որոնք տրամադրվում են «գերփոքր» հանդիսացող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին:

«Գերփոքր» առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր են համարվում «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը:

1.3. Կանոններով սահմանված պահանջները չեն տարածվում.

- 1) այն կրեդիտավորման պայմանագրերի վրա, որոնց համար նախատեսված չէ որևէ տոկոսի կամ այլ հատուցման վճարում (կատարում).
- 2) տասնհինգ միլիոն դրամը գերազանցող կրեդիտավորման պայմանագրերի վրա.
- 3) «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերի վրա, բացառությամբ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի.
- 4) վարձակալության պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պայմանագրերով նախատեսված է, որ վարձակալության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքն անցնելու է վարձակալին:

1.4. Կանոններով սահմանված պահանջները կիրառվում են բանկային ավանդների, բանկային հաշիվների և կրեդիտների սպասարկման ոլորտում ներգրավված Բանկի և Լիզինգի բոլոր աշխատակիցների կողմից:

2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ կամ Խումբ. Ներառում է Հիմնական ընկերությունը և Դուստր ընկերությունը:

Հիմնական ընկերություն կամ Բանկ. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ. Խմբի կառավարման հիմնական մարմինը:

Դուստր ընկերություն կամ Լիզինգ. «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն կամ ցանկացած ընկերություն, որը Հիմնական ընկերությունը կարող է ձեռք բերել կամ հիմնադրել որպես դուստր ընկերություն՝ կիրառելի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սպառող՝

ա. անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ) պատվիրելու կամ ձեռք բերելու նպատակով կրեդիտ ստացող ֆիզիկական անձ,

բ. գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող ֆիզիկական անձ կամ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող անհատ ձեռնարկատեր,

գ. կրեդիտ ստացող՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր.

Բանկային ավանդ՝ բանկային ավանդ կամ բանկային հաշվում առկա դրամական միջոցներ.

Կրեդիտ՝ պարտավորության տարաժամկետ վճարման իրավունք, վարկ, փոխառություն, ֆինանսական վարձակալություն (լիզինգ) կամ որևէ այլ համաձայնություն կամ պայմանավորվածություն, որի նպատակն ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելն է.

Հիպոտեկային կրեդիտ կամ հիպոտեկային վարկ՝ Բանկի տրամադրած վարկ, փոխառություն կամ այլ ֆինանսավորում, որը տրամադրվել է հետևյալ պայմաններով.

1) կրեդիտի տրամադրման նպատակը բնակարան ձեռք բերելը, կառուցելը, վերակառուցելը, վերանորոգելը, բարեկարգելը կամ արդիականացնելն է, և

2) կրեդիտի վերադարձելիությունն ապահովված է այդ բնակարանի հիպոտեկով կամ կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարանի հիպոտեկով, կամ բնակարանի կառուցման համար նախատեսված հողամասի, անավարտ շինարարության և գրավատուին պատկանող շինարարության համար ձեռքբերված նյութերի ու սարքավորումների հիպոտեկով, կամ Բանկից և Սպառողից անկախ պատճառներով ձեռք բերվող, կառուցվող, վերակառուցվող, վերանորոգվող կամ արդիականացվող բնակարանը գրավադրելու անհնարինության դեպքում՝ այլ գրավով՝ պայմանով, որ գրավադրումը բացառող պայմանների վերացման դեպքում կգրավադրվի ձեռքբերվող, կառուցվող, վերակառուցվող, վերանորոգվող կամ արդիականացվող բնակարանը, և

3) կրեդիտը տրամադրվել է որոշակի հատուցման դիմաց:

Հիպոտեկային կրեդիտ են համարվում նաև սույն կետում նշված կրեդիտների վերաֆինանսավորման նպատակով Սպառողներին տրամադրված վարկերը կամ փոխառությունները.

Ավանդային պայմանագիր՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով սահմանված ավանդը ներգրավելու նպատակով կնքված պայմանագիր.

Կրեդիտավորման պայմանագիր՝ գործարք, որով Բանկը և/կամ Լիզինգը Սպառողին տրամադրում կամ խոստանում է տրամադրել կրեդիտ.

Հիպոտեկային պայմանագիր կամ հիպոտեկային կրեդիտավորման պայմանագիր՝ պայմանագիր, որով Բանկը Սպառողին տրամադրում կամ պարտավորվում է տրամադրել բնակարանային հիպոտեկային կրեդիտ.

Պայմանագիր՝ ավանդային պայմանագիր կամ կրեդիտավորման, հիպոտեկային կրեդիտավորման պայմանագիր.

Օվերդրաֆտ՝ Բանկի կողմից կրեդիտի տեսքով սպառողական և «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված նպատակներով բանկային, ավանդային կամ այլ հաշվի վրա տրամադրված գումար կամ այդպիսի գումարի տրամադրման խոստում, այդ թվում՝ վճարային քարտերով.

Քաղվածք՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հաշվի քաղվածք կամ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քաղվածք կամ «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ.

Այլ վճարներ՝ բոլոր այն վճարները, որոնք Սպառողը պարտավոր է կատարել ֆինանսական ծառայության գծով մինչև պայմանագիր կնքելը, պայմանագրի գործողության ընթացքում և պայմանագրի դա-

դարեցման ժամանակ, բացառությամբ տոկոսագու- մարների և այն վճարների, որոնք առաջանում են պայմանագրի պայմանների խախտման արդյունքում.

Ծառայության ընդհանուր պայմաններ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ ծառայության գծով բոլոր սպառողների համար կիրառելի՝ ծառայության ստանդարտ պայմանները, Բանկի և/կամ Լիզինգի և Սպառողի միջև հարաբերությունների ընդհանուր սկզբունքները, Բանկի և/կամ Լիզինգի և Սպառողի հաղորդակցման կանոնները, Բանկի և/կամ Լիզինգի և Սպառողի միջև կատարվող գործարքների ընդհանուր պայմանները (օրինակ՝ ծառայությունների համար կիրառվող սակագներ, վարկավորման ընդհանուր պայմաններ, քարտի սպասարկման կանոններ).

Սպառողական վարկի, սպառողական լիզինգի էական պայմանների անհատական թերթիկ, Գյուղատնտեսական վարկի/վարկային գծի, գյուղատնտեսական լիզինգի էական պայմանների անհատական թերթիկ և Վարկային գծի (օվերդրաֆտի) էական պայմանների անհատական թերթիկ (այսուհետ՝ Անհատական թերթիկ)՝ փաստաթղթեր, որոնցով սահմանվում են տվյալ կրեդիտի, հիպոտեկային կրեդիտի գծով կրեդիտավորման պայմանագրի կնքման դեպքում տվյալ Սպառողի համար կիրառելի՝ կրեդիտի, հիպոտեկային կրեդիտի էական պայմանները, սակագները, Սպառողի իրավունքներն ու պարտականությունները և պարտականությունները ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները.

Մտածելու ժամանակ՝ Սպառողի իրավունքն առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում.

Համակցված ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջարկվում է հիմնական ֆինանսական ծառայության հետ միասին՝ մեկ փաթեթով: Համակցված ծառայությունները հիմնական ծառայություններից առանձին մատուցման դեպքում ունենում են այլ պայմաններ.

Օժանդակ ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջարկվում է հիմնական ֆինանսական ծառայության հետ միաժամանակ, որպես առանձին ծառայություն.

Հիմնական ֆինանսական ծառայություն՝ այն ծառայությունն է, որն առաջնային առաջարկվել է Սպառողին կամ որը ստանալու համար Սպառողը դիմել է Բանկ և/կամ Լիզինգ:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Խումբն առաջնորդվելով անձնակազմի բոլոր իրավունքների պահպանման և յուրաքանչյուրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորման սկզբունքով, անձնակազմից ակնկալում է քաղաքավարի և ուշադիր վերաբերմունքի դրսևորում Սպառողների և գործընկերների նկատմամբ:

3.2. Ղեկավարվելով անձնակազմի կառավարման գործընթացներում «Ուղղվածությունը դեպի հաճախորդ» դիրքորոշման սկզբունքով, Խումբը կարևորում է յուրաքանչյուր Սպառողի նկատմամբ բարեհամբույր և ուշադիր վերաբերմունքը և որակյալ ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ Սպառողն ամենակարևոր անձն է Խմբի յուրաքանչյուր աշխատակցի համար: Այդ առումով Խմբում սահմանված են Սպառողների և գործընկերների միջև հաղորդակցման ստորև նշված ընդհանուր սկզբունքները.

1) Բանկի և Լիզինգի կողմից բացահայտվող տեղեկատվությունը պետք է լինի հայերեն, եթե Բանկի և Լիզինգի կողմից առաջարկվող տարբերակներից Սպառողը հաղորդակցման այլ լեզու չի ընտրել.

2) Բանկի և Լիզինգի կողմից բացահայտվող տեղեկատվությունը պետք է հնարավորինս հասկանալի լինի Սպառողին, պարունակի Սպառողին հնարավորինս հասկանալի եզրույթներ, արտահայտություններ, չլինի ապակողմնորոշող, շփոթեցնող (օրինակ՝ խուսափել այնպիսի բառերի օգտագործումից, ինչպիսին «կետանց» բառն է),

3) Բանկը և Լիզինգն ապահովում են, որ իրենց կողմից բացահայտվող տեղեկատվությունը Սպառողին հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող կոնկրետ ծառայության էությունը և դրա հետ կապված ռիսկերը,

4) Բանկի և Լիզինգի կողմից բացահայտվող տեղեկատվությունը չի կարող ներկայացվել այնպիսի ձևով, որ թաքցվեն կարևոր դրույթները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են,

5) Բանկը և Լիզինգը չեն կարող չափազանցել իրենց կողմից մատուցվող ծառայությունների կարևորությունը՝ տրամադրելով կեղծ, ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկատվություն,

6) Բանկը և Լիզինգն ապահովում են, որ իրենց կողմից բացահայտվող տեղեկատվությունը լինի ճշգրիտ, արժանահավատ և ներկայացվի ժամանակին,

7) Բանկը և Լիզինգն ապահովում են, որպեսզի Սպառողին վերաբերող տեղեկատվությունը կամ վերջինիս տրամադրվող փաստաթղթերը հասանելի չլինեն այլ՝ երրորդ անձանց, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի: Օրինակ՝ բանավոր հաղորդակցումն իրականացվի այնպիսի վայրում կամ եղանակով, որ երրորդ անձանց հասանելի չլինի հաղորդակցման ընթացքում բացահայտվող տեղեկատվությունը (օրինակ՝ մատուցվող ծառայության վերաբերյալ տեղեկատվություն, Սպառողի վերաբերյալ անձնական տվյալներ՝ բնակության/աշխատանքի վայր, զբաղեցրած պաշտոն, աշխատավարձի չափ և այլն):

8) Կրեդիտին կամ Բանկային ավանդին վճարային քարտ կցված լինելու դեպքում Բանկն ապահովում է, որպեսզի Սպառողին վճարային քարտը և վճարային քարտին վերաբերող գաղտնի տեղեկատվությունը (օրինակ՝ ծածկագիր) տրամադրվի փակ ծրարներով,

9) Բանկը և Լիզինգը չպետք է վարկաբեկեն այլ ֆինանսական կազմակերպությանը, չպետք է ձևավորեն բացասական վերաբերմունք Սպառողի մոտ ֆինանսական համակարգի և դրա կարգավորումների նկատմամբ:

3.3. Բանկի, Լիզինգի և Սպառողի հաղորդակցման ժամանակ Բանկի և Լիզինգի աշխատակիցները պարտավոր են պահպանել Կանոններով, ներքին իրավական այլ ակտերով, օրենսդրական ակտերով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշմամբ (Կանոնակարգ 8/05) սահմանված հաղորդակցման ընդհանուր սկզբունքները:

4. ԲԱՆԿԻ, ԼԻԶԻՆԳԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ՄԻՆՁԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

4.1. Նախքան պայմանագրի կնքումը, Սպառողին սպասարկող Բանկի, Լիզինգի աշխատակիցները Սպառողին մանրամասն ծանոթացնում են տվյալ ժամանակահատվածում համապատասխանաբար Բանկում և Լիզինգում գործող սակագներին, ինչպես նաև առնվազն.

1) բանավոր պարզաբանում են Սպառողին հետաքրքրող ծառայության՝

ա. բնույթը,

բ. էական պայմանները՝ ծառայության գինը (տոկոսադրույք և այլն), ժամկետները, ծառայության տրամադրման հետ կապված այլ ծախսերի, պարտադիր այլ վճարների առաջացման դեպքերը և ծավալները, կիրառվող պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ Սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերը,

գ. հիմնական ռիսկերը, օրինակ՝ այն ռիսկերը, որոնք առաջանում են Սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ժամանակ, արտարժույթային տատանման ժամանակ, պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները և այլն,

2) մինչև պայմանագրի կնքելը Սպառողին հնարավորություն և բավարար ժամանակ են ընձեռում ծանոթանալու պայմանագրի դրույթներին,

3) բանավոր ներկայացնում են Սպառողի համար հետաքրքրություն առաջացրած ծառայությանը համարժեք այլ ծառայությունները,

4) բանավոր տեղեկացնում է Սպառողին Կանոնների 7.1 կետով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքի մասին, ինչպես նաև այն մասին, որ Սպառողն իրավունք ունի ընտրել նշված տեղեկատվության ստացման այլ եղանակ (օրինակ՝ փոստային կապ, հեռախոս, կարճ հաղորդագրություն, Բանկի և/կամ Լիզինգի տարածքում՝ առձեռն և այլն),

5) Սպառողին բանավոր ներկայացնում են Սպառողի կողմից մտածելու ժամանակից օգտվելու իրավունքի և օգտվելու ընթացակարգի վերաբերյալ, եթե, համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների, Սպառողն իրավունք ունի տվյալ պայմանագրի շրջանակներում օգտվել մտածելու ժամանակից:

4.2. Բանկի և Լիզինգի աշխատակիցները, բացի Կանոնների 4.1 կետով նշված գործողություններից՝

1) բանավոր բացատրում են վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի (կիրառելու դեպքում) էությունը և դրա կարևորությունը, կիրառվող սքորի տեսակի (Աքռա, Ֆայկո, սեփական սքոր գնահատական, թե այլ), սքորի վրա ազդող հիմնական գործոնների մասին,

2) ներկայացնում են նաև տեղեկատվություն սքոր գնահատականի վրա վարկային հարցման ազդեցության վերաբերյալ՝ հստակ նշելով սքորի տեսակը և գործողության ազդեցության ուղղությունը: Ընդ որում՝ սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է նախքան հարցման կատարման համաձայնության ստացումը,

3) Սպառողին բանավոր տեղեկացնում են Կրեդիտային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու Սպառողի իրավունքի մասին՝ պարզաբանելով, որ.

ա. Սպառողն իրավունք ունի պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Ընդ որում՝ հատուկ շեշտադրվում է ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում Սպառողի կրեդիտավորման ծախսից նվազեցման ենթակա և ոչ ենթակա վճարները: Հիպոտեկային կրեդիտների դեպքում Սպառողին բանավոր տեղեկացվում է վաղաժամկետ մարման ձևի, ընտրության հնարավորության, ինչպես նաև կիրառվող տույժ/տուգանքների և օրենքով սահմանված այլ անբարենպաստ հետևանքների մասին,

բ. Սպառողի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն նվազեցվում է Սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսը,

գ. Սպառողի՝ սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններով նախատեսված իրավունքը սահմանափակող, ինչպես նաև սույն ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ սահմանող համաձայնությունն առ ոչինչ է,

դ. Սպառողի՝ սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններով նախատեսված իրավունքն իրականացնելու դեպքում Բանկը և/կամ Լիզինգը չի կարող կիրառել պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ Սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց),

4) Վարկային կոմիտեի դրական որոշման դեպքում Բանկի և Լիզինգի աշխատակիցը հաճախորդին տրամադրում է Անհատական թերթիկ:

4.3. Կրեդիտային հայտ ներկայացնելիս Բանկը, Լիզինգը Սպառողին գրավոր տրամադրում են տեղեկատվություն վարկային բյուրոյից Սպառողի մասին կատարվող հարցումների վերաբերյալ, որն առնվազն պետք է ներառի հետևյալը.

1) կատարվող հարցումների նպատակն առանձին տողերով (օրինակ՝ վարկի տրամադրում, գործող վարկի մոնիթորինգ, այլ ծառայությունների առաջարկ),

2) հարցման յուրաքանչյուր նպատակի համար առանձին նշվում է հարցման հաճախականությունը (եթե սահմանված է) և ժամկետը, որի համար տրվում է համաձայնությունը, ինչպես նաև ազդեցությունը վարկային սքորի վրա (օրինակ՝ բարձրացնում է, իջեցնում է, չի ազդում): Ընդ որում՝ հարցման ժամկետը չի կարող լինել ավելին, քան տվյալ ծառայության պայմանագրի գործողության ժամկետն է,

3) եթե սույն կետի համաձայն որևէ նպատակով հարցումներ կատարելու համաձայնությունը պարտադիր պայման է հայտ ներկայացնելու համար, ապա՝ նշում այդ մասին: Ընդ որում՝ մարքեթինգային, այլ ծառայությունների առաջարկի նպատակով իրականացվող հարցումները չեն կարող համարվել պարտադիր պայման այդ ծառայությունը մատուցելու համար:

4.4. Յուրաքանչյուր անգամ Սպառողի վերաբերյալ վարկային հարցում կատարելիս, եթե այդ հարցումը ազդելու է վարկային սքոր գնահատականի վրա (Ֆայկո, Աքոա կամ սեփական սքոր), ապա Բանկը, Լիզինգը պարտավոր են Սպառողին հայտնել այդ մասին հարցումը կատարելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում՝ նշելով հարցման ամսաթիվը, նպատակը (օրինակ՝ նոր վարկի տրամադրում, վարկի գումարի ավելացում) և տեսակը (վարկային պատմություն թե սքոր), ինչպես նաև տեղեկատվություն կամ հղում Կանոնների 4.2 կետի 2-րդ ենթակետում նշված վարկային պատմության/վարկային սքորի վերաբերյալ տեղեկատվությունը պարունակող ինտերնետային կայք(եր)ի համապատասխան էջին: Բանկը, Լիզինգը սահմանված տեղեկատվությունը Սպառողին հայտնում են անվճար՝ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Սպառողի վարկային սքորի վրա ազդեցություն ունեցող հարցումներ կատարելիս էլեկտրոնային հաղորդագրության միջոցով այդ տեղեկատվությունն ուղարկելու անհնարինության դեպքում (երբ Սպառողը չունի էլեկտրոնային հասցե կամ չի օգտվում Բանկի, Լիզինգի առցանց կամ բջջային հավելվածներից), Բանկը, Լիզինգը տեղեկացնում է Սպառողին այլ հասանելի եղանակներով (օրինակ՝ կարճ հաղորդագրության միջոցով կամ առձեռն):

4.5. Եթե Բանկը և/կամ Լիզինգը հրաժարվում է ծառայություն մատուցել ծառայությունից օգտվելու գրավոր դիմում (հայտ, պահանջ) ներկայացրած Սպառողին, ապա այդ մասին Բանկը, Լիզինգը որոշումը կայացնելուց հետո առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր (թղթային կամ էլեկտրոնային)՝ Վարկի կամ լիզինգի մերժման գրությամբ՝ [eFO 76-20-01](#), [eFO 10-08-01](#) հայտնում է Սպառողին՝ մանրամասն նշելով նաև մերժման պատճառները:

4.6. Եթե Բանկը և/կամ Լիզինգը հրաժարվում է ծառայությունից օգտվելու գրավոր դիմում (հայտ, պահանջ) ներկայացրած Սպառողին ծառայություն մատուցելուց, ապա Բանկը, Լիզինգը Սպառողի պահանջով վերադարձնում է Սպառողին այն փաստաթղթերի բնօրինակները, որոնք Սպառողը ձեռք էր բերել երրորդ անձանցից՝ ծառայության ստացման նպատակով Բանկին և/կամ Լիզինգին ներկայացնելու համար (օրինակ՝ տեղեկանք բնակության վայրից կամ աշխատավայրից, գույքի գնահատման ակտ, նոտարական վավերացմամբ փաստաթուղթ և այլն):

4.7. Եթե Բանկը և/կամ Լիզինգը հիմնական ծառայության մատուցմանը միաժամանակ առաջարկում է որևէ համակցված կամ օժանդակ, կամ բոնուսային (խրախուսական) ծառայություն, ապա համակցված, կամ օժանդակ, կամ բոնուսային ծառայության մասին հաղորդակցման ժամանակ Բանկը և/կամ Լիզինգը պահպանում է Կանոնների 4.1, իսկ համապատասխան կրեդիտի դեպքում՝ նաև 4.2 կետերով սահմանված հաղորդակցման կանոնները, ինչպես նաև Սպառողին տեղեկացնում է օժանդակ կամ բոնուսային ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին:

4.8. Այն դեպքում, երբ Բանկը և/կամ Լիզինգը ծառայության մատուցումն իրականացնում է հեռահար՝ էլեկտրոնային եղանակով և չի կարող ապահովել մինչև պայմանագրի կնքումը Սպառողի հետ բանավոր հաղորդակցումը, ապա Բանկը և/կամ Լիզինգը Կանոնների 4.1-4.7-րդ կետերով և 5.2-րդ կետի 3-րդ, 4-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը հասանելի է դարձնում Սպառողներին հեռահար եղանակներով (օրինակ՝ ինտերնետային կայքում տեսաձայնագրության կամ այլ միջոցներով (օրինակ՝ Կանոնների 4.1-4.7-րդ կետերով սահմանված տեղեկատվությունն ամփոփ ձևով մեկ ֆայլում ներկայացնելու միջոցով)):

1) Այն դեպքում, երբ Բանկը և/կամ Լիզինգն իր ծառայությունները մատուցում է իր գործունեության վայրից դուրս՝ երրորդ անձանց միջոցով, համապատասխանաբար Բանկը և/կամ Լիզինգն ապահովում է երրորդ անձի միջոցով Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան տվյալ ծառայության վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը և տրամադրումը Սպառողին: Ընդ որում՝ երրորդ անձը Բանկի և/կամ Լիզինգի կողմից ստացված տեղեկատվությունը բացահայտում և տրամադրում է Սպառողին:

4.9. Նույն Սպառողի հետ նույն պայմաններով Կրեդիտային, Հիպոտեկային կամ Ավանդային պայմանագրի կնքման (այդ թվում՝ վերակնքման, երկարաձգման) դեպքում Բանկը և/կամ Լիզինգը կարող է չպահպանել Կանոնների 4.1-4.7-րդ կետերով սահմանված պահանջները, սակայն պայմաններում փոփոխություն տեղի ունենալու դեպքում, պարտավոր է մինչև պայմանագրի կնքումը Սպառողին բանավոր ներկայացնել իրականացված փոփոխությունները, իսկ կիրառելիության դեպքում՝ պահպանել նաև Կանոնների 5.10 և 7.4 կետերի պահանջները:

5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԿԱՍ ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ (ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ)

5.1. Սպառողի կրեդիտային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո Բանկը և/կամ Լիզինգն իր կողմից առաջարկվող կրեդիտի պայմանների և Սպառողի կողմից տրված փաստաթղթերի հիման վրա նախքան կրեդիտավորման պայմանագրի, հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի կնքումը Սպառողին տրամադրում է Անհատական թերթիկ: Հիպոտեկային կրեդիտների դեպքում Անհատական թերթիկը Սպառողին տրամադրվում է նաև որպես «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գրավոր առաջարկ՝ օֆերտա, եթե անհատական թերթիկի հետ միասին ներկայացվել է նաև կրեդիտավորման պայմանագրի նախագիծը: Օֆերտային վերաբերող սույն կետի դրույթները գործում են, եթե Բանկն այլ ձևաչափով օֆերտայի տրամադրում չի սահմանել: Անհատական թերթիկը տալվում է ծրագրից, ստորագրվում, կնքվում է և տրամադրվում Սպառողին Բանկից և/կամ Լիզինգից տեղեկատվության ստացման իր նախընտրած եղանակով: Անհատական թերթիկը Սպառողին (երաշխավորին) կարող է ուղարկվել փոստային կամ

էլեկտրոնային կապի եղանակով կամ տրամադրվել առձեռն՝ Բանկի և/կամ Լիզինգի տարածքում, ընդ որում՝ փոստային կամ էլեկտրոնային կապի եղանակով Անհատական թերթիկը Սպառողին (երաշխավորին) պետք է ուղարկվի վարկային կոմիտեի որոշումից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ առձեռն՝ Բանկի և/կամ Լիզինգի տարածքում տրամադրելու դեպքում, վարկային կոմիտեի դրական որոշումից հետո Սպառողի (երաշխավորի) Բանկ և/կամ Լիզինգ առաջին այցի ժամանակ: Եթե առձեռն եղանակն ընտրելու դեպքում Սպառողը (երաշխավորը) չի այցելում Բանկի և/կամ Լիզինգի տարածք կամ այցելում է, սակայն հնարավոր չի լինում նույնականացնել Սպառողին (երաշխավորին) և Բանկի և/կամ Լիզինգի մոտ առկա է էլեկտրոնային փոստի հասցե, ապա Բանկը և/կամ Լիզինգն ուղարկում է Անհատական թերթիկի էլեկտրոնային տարբերակը:

5.2. Բանկը և/կամ Լիզինգը՝

1) ապահովում է Անհատական թերթիկում ներառված պայմանների համապատասխանությունը կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի դրույթներին՝ բացառությամբ տարեկան փաստացի տոկոսադրույքի, որը, մարման ժամանակացույցի և/կամ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, կարող է տարբերվել, իսկ արտարժույթային գյուղատնտեսական վարկերի, հիպոտեկային կրեդիտների, վճարային քարտերով տրամադրված վարկային գծերի դեպքում նաև փոխարժեքի, որը, ամսաթվից կախված, կարող է փոփոխվել,

2) ապահովում է Անհատական թերթիկի տրամադրումը ժամանակին, այսինքն՝ մինչև Կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի կնքումը Սպառողը հնարավորություն է ունենում ծանոթանալու Կրեդիտի, Հիպոտեկային կրեդիտի էական պայմաններին և ցանկության դեպքում, համեմատելու այլ կրեդիտավորողների կողմից առաջարկվող Կրեդիտի էական պայմանների հետ,

3) բանավոր պարզաբանում է Անհատական թերթիկի էությունը և դրա կարևորությունը,

4) բանավոր տեղեկացնում է Անհատական թերթիկի գործողության ժամկետի վերաբերյալ,

5) Անհատական թերթիկի ստորագրման ժամանակ որևէ կերպ չի ուղղորդում Սպառողին, սակայն հուշում է ստորագրությունների քանակը,

6) բանավոր պարզաբանում է Անհատական թերթիկի և Կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերի միջև հնարավոր տարբերությունների վերաբերյալ՝ պայմանավորված մարման ժամանակացույցի և/կամ փոխարժեքի փոփոխությամբ:

5.3. Կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում Սպառողի պահանջով Բանկը, Լիզինգը տրամադրում են նոր Անհատական թերթիկ հետևյալ դեպքերում.

1) անվանական տոկոսադրույքի չափի փոփոխություն,

2) իրավական ակտերի փոփոխություններ, որոնք ուղղակի ազդեցություն ունեն Սպառողի՝ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների վրա,

3) ծառայության ընդհանուր պայմանների և այլ վճարների փոփոխություն,

4) կողմերի՝ պայմանագրից բխող իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության վրա ուղղակի ազդեցություն ունեցող այլ հանգամանքների փոփոխություն ներառյալ՝ վարկային բյուրո տվյալներն ուղարկելը:

5.4. Անհատական թերթիկների տրամադրման փաստն ապացուցող փաստաթղթերը պահվում են վարկային փաթեթներում առնվազն երեք տարի (օրինակ՝ դիմումը, Սպառողի ստորագրությամբ տրված ստացականը, նամակն ուղարկելու փաստն հիմնավորող փաստաթուղթը, էլեկտրոնային փոստի ծանուցման հաղորդագրությունը):

5.5. Եթե Սպառողի (երաշխավորի (առկայության դեպքում)) համար հասկանալի է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը և նա համաձայն է Անհատական թերթիկի հետ, ապա ստորագրում է Անհատական թերթիկների երկու (երաշխավորի առկայության դեպքում՝ երեք) օրինակները և վերադարձնում Բանկ, Լիզինգ (երաշխավորին) առձեռն՝ Բանկի, Լիզինգի տարածքում կամ էլեկտրոնային եղանակով՝ (օրինակ՝ գործող էլեկտրոնային փոստով): Այն դեպքում, երբ Անհատական թերթիկը Սպառողին է տրամադրվում առցանց տիրույթում՝ Բանկի, Լիզինգի ներքին իրավական ակտերով նույնականացված Սպառողի անձնական էջի կամ առցանց այլ եղանակների միջոցով, ապա այն ստորագրված է համարվում, եթե ստորագրման ենթակա դաշտերում առկա է հավաստող նշումը (օրինակ՝ check box), իսկ վերադարձ է համարվում համաձայնության համար պահանջվող գործողությունների կատարումը (օրինակ՝ «Համաձայն եմ Անհատական թերթիկով սահմանված

պայմաններով վարկ/լիզինգ) ստանալ» վերնագրով վավերացնող կոճակի սեղմումը):

5.6. Ստորագրված Անհատական թերթիկներից մեկ օրինակը տրամադրվում է Սպառողին, իսկ մյուսը ենթակա է արխիվացման համապատասխանաբար Բանկի և/կամ Լիզինգի կողմից: Երաշխավորի առկայության դեպքում Անհատական թերթիկներից երրորդ օրինակը տրամադրվում է երաշխավորին:

5.7. Այն դեպքում, երբ մեկ Կրեդիտը տրամադրվում է մեկից ավելի անձանց, ապա Բանկը և/կամ Լիզինգը Անհատական թերթիկի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր Սպառողին՝ Կանոնների 5.1 կետով սահմանված կարգով:

5.8. Այն դեպքում, երբ Սպառողի պարտավորությունների կատարումն ապահովված է մեկից ավելի անձանց երաշխավորությամբ, ապա Բանկը և/կամ Լիզինգը Անհատական թերթիկի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր երաշխավորին՝ Կանոնների 5.1 կետով սահմանված կարգով:

5.9. Անհատական թերթիկի պայմանները գործում են համապատասխանաբար վարկի կամ լիզինգի տրամադրման դրական որոշման վերաբերյալ Սպառողին տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օր (եթե Սպառողը ստորագրված թերթիկը Բանկին, Լիզինգին ներկայացնում է սահմանված ժամկետից ուշ, ապա Բանկը և/կամ Լիզինգն ինքն է որոշում ընդունել թերթիկը և կնքել Կրեդիտավորման պայմանագիրն այդ պայմաններով, թե ոչ), իսկ հեռահար եղանակով վարկերի տրամադրման դեպքում՝ վարկի տրամադրման դրական որոշման վերաբերյալ Սպառողին տեղեկացնելուց հետո 20 աշխատանքային օր: Առցանց տիրույթում՝ Սպառողի անձնական էջի կամ առցանց այլ եղանակների միջոցով տրամադրվող կրեդիտների դեպքում, Բանկը և/կամ Լիզինգը ապահովում է, որ ստորագրման ենթակա դաշտերում առկա հավաստող նշումը (օրինակ՝ checkbox) ակտիվանա անմիջապես: Իսկ տեխնիկաձրագրային անհնարինության դեպքում, աչքի ընկնող ձևով նշվում է Անհատական թերթիկը կարդալու կարևորության մասին (! **Շատ կարևոր է ծանոթանալ անհատական թերթիկի բովանդակությանը:**):

5.10. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված հիմքերով Բանկի և/կամ Լիզինգի կողմից Կրեդիտավորման պայմանագրի, Հիպոտեկային կրեդիտի պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է միակողմանիորեն Բանկի և/կամ Լիզինգի գործող նոր պայմաններով, ինչի արդյունքում փոխվում է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը, ապա Բանկը և/կամ Լիզինգը տրամադրում է նոր Անհատական թերթիկ՝ Կանոնների 5.1 կետով սահմանված կարգով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՆԿԻ, ԼԻԶԻՆԳԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Բանկի/Լիզինգի և Սպառողի հետ կնքվող պայմանագրերում պետք է առկա լինեն նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) նշում այն մասին, որ Սպառողը հնարավորություն ունի Բանկի և/կամ Լիզինգի և Սպառողի միջև կնքվող գործարքից բխող բողոքները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը **չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը** և գործարքի գումարի չափը **չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը**, ապա Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի և/կամ Լիզինգի կողմից,

2) եթե պայմանագրի առնչությամբ Բանկի և/կամ Լիզինգի և Սպառողի միջև կնքվում է արբիտրաժային համաձայնություն, ապա գրավոր բացահայտվում է կողմերի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Պայմանագրին կից տրամադրվում է Ի՞նչ անել, եթե բողոք ունեք՝ [eFO 81-00-11](#), [eFO 22-06-01](#) փաստաթուղթը,

3) պայմանագրի առաջին էջում աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով և/կամ այլ ձևով ներկայացվում է Բանկի և/կամ Լիզինգի կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն):

6.2. Բանկը և/կամ Լիզինգը ապահովում է, որ Կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերը, բացի Կանոնների 6.1 կետով և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխով սահմանված տեղեկատվությունից, ներառեն նաև «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ի 5-րդ գլխով սահմանված տեղեկատվու-

թյունը:

6.3. Կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերը կարող են պարունակել նաև օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին չհակասող այլ դրույթներ:

6.4. Այն դեպքերում, երբ մեկ Կրեդիտը տրամադրվում է մեկից ավելի անձանց, ապա Բանկը և/կամ Լիզինգը Կրեդիտավորման, Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերի մեկական օրինակ և պայմանագրերի անբաժանելի մաս կազմող պայմանները տրամադրում է յուրաքանչյուր Սպառողի:

6.5. Կրեդիտի տրամադրման, բանկային ավանդի ներդրման, հաշվի բացման և սպասարկման ընթացքում Սպառողի ստորագրությանը ներկայացվող բոլոր փաստաթղթերը (դիմում, պայմանագիր, էական պայմանների անհատական թերթիկ, «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկ, այլ), որտեղ ցուցադրվում են բջջային և քաղաքային հեռախոսահամարներ, էլեկտրոնային հասցե, բնակության/գործունեության հասցե, բանկային գաղտնաբառ, Սպառողի ստորագրությանը ներկայացնելիս վերջիններիս ուշադրությունը հրավիրվում է մուտքագրված տվյալներին՝ իսկության հաստատումը ևս մեկ անգամ ստանալու նպատակով:

Ստորագրության ներկայացված փաստաթղթերում տվյալների անճշտության հայտնաբերման դեպքում կատարվում են փաստաթղթային և/կամ «SAP CRM» ծրագրում Սպառողի անձնական տվյալներում փոփոխություններ՝ վերջիններիս ուղղման նպատակով:

7. ԲԱՆԿԻ, ԼԻԶԻՆԳԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

7.1. Ավանդային կամ Կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում Բանկը կամ Կրեդիտավորման պայմանագրի դեպքում Լիզինգը Սպառողին տեղեկացնում է՝

- 1) անվանական տոկոսադրույքի չափի փոփոխության մասին,
- 2) կողմերի միջև հաղորդակցման կարգի փոփոխության մասին,
- 3) իրավական ակտերի այն փոփոխությունների մասին, որոնք ուղղակի ազդեցություն ունեն Սպառողի՝ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների վրա,
- 4) Ծառայության ընդհանուր պայմանների և այլ վճարների փոփոխության մասին,
- 5) կողմերի՝ պայմանագրից բխող իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության վրա ուղղակի ազդեցություն ունեցող այլ հանգամանքների փոփոխության՝ ներառյալ վարկային բյուրո տվյալներն ուղարկելու մասին:

7.1.1. Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում Բանկը, բացի «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունից, Սպառողին գրավոր՝ այդ թվում էլեկտրոնային եղանակով, վճարման իրականացումից առնվազն 7 օր առաջ տեղեկացնում է այն մասին, որ Բանկի պահանջով Հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրի ընթացքում Սպառողը պետք է վճարի ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների համար, և այդ վճարների կատարման ժամկետների, չափի և չկատարման դեպքում բացասական հետևանքների մասին:

7.2. Այն դեպքում, երբ պայմանագրի գործողության ընթացքում Սպառողը, Բանկի աշխատակցի միջամտությամբ կանխիկացնում է Կրեդիտը, Հիպոտեկային կրեդիտը կամ Ավանդը և կանխիկացման համար Սպառողից գանձվելու է որևէ միջնորդավճար, ապա Բանկի աշխատակիցը բանավոր և/կամ գրավոր հայտնում է այդ մասին Սպառողին և կանխիկացման միջնորդավճարի մեծության հետ համաձայնության գալու դեպքում շարունակում է համապատասխան գործողությունը:

7.3. Կանոնների 7.1 կետով սահմանված տեղեկատվությունը Սպառողին տրամադրվում է էլեկտրոնային կապի միջոցով: Սպառողի գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա Կանոնների 7.1 կետով սահմանված տեղեկատվությունը վերջինիս կարող է տրամադրվել գործող փոստային կամ կապի այլ միջոցով (հեռախոս, կարճ հաղորդագրություն, Բանկի և/կամ Լիզինգի տարածքում՝ առձեռն և այլն): Ընդ որում՝ Բանկը և/կամ Լիզինգը չի կարող ուղղորդել Սպառողին ծանուցման որևէ եղանակ ընտրելու հարցումը կամ սահմանափակել ծանուցման եղանակ ընտրելու հնարավորությունը:

7.4. Այն դեպքում, երբ Կրեդիտավորման պայմանագրի գործողության ընթացքում տեղի են ունենում Կանոնների 7.1 կետի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված փոփոխությունները, իսկ

Հիպոտեկային կրեդիտների դեպքում «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվության փոփոխությունները, որոնց արդյունքում փոխվում է Անհատական թերթիկում ներառված տեղեկատվությունը, ապա Սպառողի գրավոր կամ բանավոր պահանջով Բանկը և/կամ Լիզինգը տրամադրում է նոր Անհատական թերթիկ՝ Կանոնների 5.1 կետով սահմանված կարգով:

7.5. Կանոնների 7.1 կետով նախատեսված տեղեկատվությունում Բանկի և/կամ Լիզինգի կողմից միակողմանիորեն փոփոխություն կատարելու դեպքում փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը Սպառողին տրամադրվում է վերջինիս նախընտրած եղանակով համապատասխան փոփոխության որոշման կայացումից հետո, սակայն ոչ ուշ, քան որոշումն ուժի մեջ մտնելուց 7 աշխատանքային օր առաջ, բացառությամբ վարկային բյուրո տվյալներն ուղարկելու դեպքի, այլ դեպքերում՝ Կանոնների 7.1 կետով նախատեսված տեղեկատվությունում կատարված փոփոխությունը Սպառողին տրամադրվում է ոչ ուշ, քան համապատասխան փոփոխությունը տեղի ունենալուց և Բանկի և/կամ Լիզինգի կողմից տեղեկանալուց 7 աշխատանքային օր հետո:

7.6. Կանոնների 7.1 կետով նախատեսված տեղեկատվությունը պայմանագրի սպասարկման ընթացքում ներկայացնելիս պահպանվում են հաղորդակցման հետևյալ ընդհանուր սկզբունքները.

1) Բանկը և/կամ Լիզինգը պարզաբանում է կատարված փոփոխությունները՝ ներկայացնելով դրանց հնարավոր ազդեցությունները,

2) Բանկը և/կամ Լիզինգը տրամադրում է այն կապի միջոցները (հեռախոսահամար, էլեկտրոնային հասցե), որոնցով Սպառողը կկարողանա լրացուցիչ տեղեկություններ ստանալ Կանոնների 7.1 կետով նախատեսված տեղեկատվության մասին,

3) Բանկը և/կամ Լիզինգը պարտադիր տրամադրվող տեղեկատվությունն այնպես է ներկայացնում, որ տեղեկատվության կարևոր հատվածներում ակնհայտ լինեն առանձնացված կոնկրետ վերնագրեր, իսկ տեքստի առավել կարևոր մասերում առկա լինեն շեղատառեր կամ ավելի մեծ տառաչափեր:

7.7. Բանկը և/կամ Լիզինգն ապահովում է, որպեսզի առնվազն մեկ տարի պահպանվեն Սպառողին՝ Կանոնների 7.1 կետով սահմանված տեղեկատվության տրամադրման հիմքերը՝ էլեկտրոնային փոստով ծանուցման հաղորդագրություն, առաքման անդորրագիր, հեռախոսազանգի ձայնագրություն, առձեռն տրամադրման վերաբերյալ ստացական և այլն:

7.8. Այն դեպքերում, երբ Բանկը և/կամ Լիզինգը Կանոնների 7.1 կետով նախատեսված տեղեկատվությունը հաղորդում է հեռախոսով, ապա աշխատակիցը՝

1) բացահայտում է իր անունը, ինչպես նաև Բանկի կամ Լիզինգի անվանումը,

2) մատչելի և գրական հայերենով, եթե կողմերի համաձայնությամբ այլ լեզվով հաղորդակցում նախատեսված չէ, հաղորդում է զանգահարելու նպատակը,

3) տեղեկացնում է հեռախոսային խոսակցության ձայնագրման մասին, եթե այն ձայնագրվում է,

4) Սպառողի ցանկության դեպքում ընդհատում է հեռախոսային խոսակցությունը և Սպառողին զանգում ավելի ուշ:

7.9. Սպառողի պարտավորության կատարման օրից առնվազն 1 օր առաջ Բանկը և/կամ Լիզինգը Սպառողին հայտնում է մարման ենթակա պարտավորության առկայության մասին, ինչպես նաև այդ պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված կարգով վարկային բյուրոյին տրամադրելու մասին: Բանկը և/կամ Լիզինգը վերոնշյալ տեղեկատվությունը Սպառողին հայտնում է անվճար՝ կարճ հաղորդագրության (sms) և/կամ էլեկտրոնային հաղորդագրության միջոցով: Բանկը և/կամ Լիզինգը Սպառողին տրամադրում է վերոնշյալ եղանակներից որևէ մեկն ընտրելու հնարավորություն: Բանկի և/կամ Լիզինգի կողմից սույն կետով սահմանված պահանջի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը Սպառողին չի ազատում մարման ժամանակացույցով սահմանված պարտավորության կատարումից:

7.10. Այն դեպքում, երբ Կրեդիտի, Հիպոտեկային կրեդիտի մարման ժամանակացույցում տեղի են ունենում փոփոխություններ՝ կապված Սպառողի կողմից Կրեդիտի վաղաժամկետ մարման, տոկոսադրույքի փոփոխման և այլ հանգամանքների հետ, ապա Բանկը և/կամ Լիզինգը Սպառողի ցանկության դեպքում առավելագույնը 1 աշխատանքային օրվա ընթացքում Սպառողի նախընտրած եղանակով (առձեռն, գործող էլեկտրոնային փոստ, այլ) անվճար տրամադրում է Կրեդիտի մարման նոր ժամանակացույցը: Փոստային կապի ընտրության դեպքում՝ Կրեդիտի մարման նոր ժամանակացույցը

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՊԱՌՈՂԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ

8.1. Համապատասխանաբար Բանկի կամ Լիզինգի կողմից սպառողներին «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով և «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով և/կամ ներքին իրավական ակտերով սահմանված պարբերականությամբ, ինչպես նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Սպառողի պահանջով և նրա կողմից ընտրված ժամանակահատվածի համար տրամադրվող քաղվածքները, ըստ ծառայության տեսակի, նվազագույնը պետք է ներառեն Կանոնակարգ 8/05-ով սահմանված տարրերը՝ համաձայն բնութագրերի:

8.2. Բանկը և/կամ Լիզինգը Սպառողին տրամադրում է միայն այն ծառայության (ծառայությունների) վերաբերյալ քաղվածք(ներ), որից վերջինս օգտվում է:

«Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Սպառողի պահանջով և նրա կողմից ընտրված ժամանակահատվածի համար տրամադրվող քաղվածքները Բանկը տրամադրում է Սպառողի կողմից բանավոր ձևով (օրինակ՝ Բանկի տարածքում աշխատակցի միջոցով), ինչպես նաև Բանկի կողմից ընդունելի կապի այլ միջոցներով (օրինակ՝ էլեկտրոնային փոստ) դիմելու դեպքում: Էլեկտրոնային փոստի միջոցով դիմելիս Սպառողը դիմումը ներկայացնում է այն էլեկտրոնային փոստից, որը նախապես տրամադրել է Բանկին:

8.3. Բանկը և/կամ Լիզինգը Սպառողին տրամադրում է Բանկի և/կամ Լիզինգի կողմից առաջարկվող լեզուներից Սպառողի ընտրած լեզվով քաղվածք: Այն դեպքում, երբ Սպառողը Բանկի կամ Լիզինգի կողմից առաջարկվող տարբերակներից քաղվածքի ստացման այլ լեզու չի ընտրել, ապա Սպառողին տրամադրվում է առնվազն հայերեն տարբերակով քաղվածք:

8.4. Էլեկտրոնային եղանակով քաղվածքի տրամադրման դեպքում, Բանկը և/կամ Լիզինգը ապահովում է, որպեսզի՝

1) քաղվածքը ուղեկցող հաղորդագրությունն առնվազն պարունակի Բանկի կամ Լիզինգի կողմից առաջարկվող տարբերակներից Սպառողի նախընտրած լեզվով Սպառողի անուն-ազգանունը, քաղվածքում ընդգրկված ժամանակահատվածը, այն ծառայության անվանումը, որի համար տրամադրվում է քաղվածքը և հեռախոսահամար, էլեկտրոնային հասցեն, որոնցով Սպառողը կարող է սպառիչ տեղեկատվություն ստանալ քաղվածքի հետ կապված հարցերի վերաբերյալ: Հաղորդագրությունում նշվում է նաև այն մասին, որ Սպառողը պետք է մանրամասն ուսումնասիրի իր քաղվածքը՝ ստուգելու դրանում ներկայացվող տեղեկատվության ճշգրտությունը,

2) քաղվածքի հասանելիությունը խոչընդոտող տեխնիկաձրագրային սահմանափակումներ չլինեն (օրինակ՝ «.zip» ձևաչափով ներկայացված կամ մասնագիտական ծրագրերի կիրառությամբ) և քաղվածքը էլեկտրոնային նամակին կցված լինի Սպառողի նախընտրած ձևաչափով: Այն դեպքում, եթե Սպառողի նախընտրությունը հնարավոր չի պարզել, ապա էլեկտրոնային նամակին քաղվածքը կցվում է «.xls» («.xlsx») ձևաչափով,

3) քաղվածքի էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային նամակի անվանումը («առարկա» տողը) պարունակի «statement» կամ «քաղվածք» բառը, հաշվետու ժամանակահատվածը, ծառայության տեսակը, որի համար ուղարկվում է քաղվածքը, արժույթը, վճարային քարտի դեպքում նաև քարտի տեսակը, վերջին 4 թվերը, բազմարժույթային քարտի դեպքում արժույթի փոխարեն նշվում է «բազմարժույթային» կամ «multicurrency» բառը (Բանկի դեպքում, օրինակներ՝ STATEMENT 01.10.15-30.10.15 CARD VISA 9550 AMD, STATEMENT 01.10.15-30.10.15 AVAND USD, ՔԱՂՎԱԾՔ 01.10.15-30.10.15 ԱՎՏՈՎԱՐԿ AMD, STATEMENT 01.10.15-30.10.15 CARD 9550 MULTICURRENCY, Լիզինգի դեպքում, օրինակ՝ ՔԱՂՎԱԾՔ 01.10.15-30.10.15 ԼԻԶԻՆԳ AMD),

4) «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Սպառողի պահանջով և նրա կողմից ընտրված ժամանակահատվածի համար տրամադրվող քաղվածքը պարունակի Բանկի համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից հաստատում (ստորագրություն, կնիք):

8.5. Առձեռն, փոստային կապի միջոցով և էլեկտրոնային եղանակով քաղվածքների տրամադրված հիմքերն անհրաժեշտ է պահպանել առնվազն **1 տարի** հետևյալ կերպ.

1) առձեռն՝ Բանկի կամ Լիզինգի տարածքում քաղվածքը տրամադրելու դեպքում պահպանվում է Սպառողին տրամադրվող քաղվածքի առաջին էջի պատճենը, որի վրա Սպառողը ձեռագրով գրում է՝ «Ստացել եմ» բառերը, նշում ամիս-ամսաթիվը և ստորագրում,

2) փոստային կապի միջոցով քաղվածքի ուղարկման դեպքում պահպանվում է ուղարկման անդորրագիրը և/կամ ստացման մասին հետադարձ ծանուցումը,

3) էլեկտրոնային եղանակով քաղվածքի ուղարկման դեպքում պահպանվում է ուղարկման և ստացման ապացուցելիությունը (օրինակ՝ Return receipt, Send receipt):

8.6. Այն դեպքերում, երբ մեկ Կրեդիտոր, Հիպոտեկային կրեդիտոր տրամադրվում է մեկից ավելի անձանց կամ մեկ ավանդը ներդրվում է մի քանի անձանց կողմից, Բանկը և/կամ Լիզինգը քաղվածքի մեկական օրինակ տրամադրում է յուրաքանչյուր Սպառողի: Այն դեպքում, երբ մեկ հիպոտեկային կրեդիտոր տրամադրվում է մեկից ավելի անձանց, ապա նրանցից յուրաքանչյուրը կարող է դիմել Բանկ և ստանալ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված ցանկացած ժամանակահատվածի համար տրվող քաղվածք:

9. ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ, ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ (ՄԱՐԵԼՈՒ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱՅՈՒՄԸ

9.1. Բանկի և/կամ Լիզինգի տարածքում, Կրեդիտոր, այդ թվում՝ Հիպոտեկային կրեդիտոր, սպասարկող բանկի գործունեության վայրում, պայմանագրով նախատեսված պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում Սպառողին (վճարում իրականացնողին) ներկայացվող տեղեկատվությունը կարող է լինել գրավոր կամ բանավոր, իսկ առցանց տարբերակով պարտավորությունների ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում հեռահար սպասարկման սարքավորման էկրանին հայտնվող հաղորդագրությունների միջոցով:

9.2. Այն դեպքում, երբ Բանկում և/կամ Լիզինգում առկա է Սպառողի հետ էլեկտրոնային (հեռահար) եղանակով հաղորդակցման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն (էլեկտրոնային փոստի հասցե, բջջային հեռախոսահամար և այլն), ապա Բանկը և/կամ Լիզինգը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային հասցեի, կարճ հաղորդագրության կամ հեռախոսազանգի միջոցով տեղեկացնում է Սպառողին այն մասին, որ վերջինիս վարկի գծով իրականացվել է պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում), տվյալ մարումը ուղղվել է վարկի մայր գումարի նվազմանը և համամասնորեն նվազեցվել է կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի և/կամ Լիզինգի եկամուտը ձևավորող վճարները: Տեղեկացվում է նաև այն մասին, որ փոփոխվել է հետագա մարումների ժամանակացույցը և, որ նոր մարումներով ժամանակացույց ստանալու, ինչպես նաև հերթական մարման վերաբերյալ տեղեկանալու համար մեկ աշխատանքային օր հետո Սպառողը կարող է դիմել համապատասխանաբար Բանկին կամ Լիզինգին:

9.3. Սպառողական կրեդիտների դեպքում.

1) պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) է համարվում Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից պարտավորությունների մարմանն ուղղված վճարման իրականացումը, որը չի համընկնում Կրեդիտավորման պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարման (հերթական վճարում) ամսաթվի կամ վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ:

2) պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) չի համարվում, եթե.

ա. առկա է Սպառողի (վճարում իրականացնողի) գրավոր հանձնարարականը, որտեղ նշված է վճարման «այլ նպատակ» (օրինակ՝ ուղղել հերթական 2 ամիսների տոկոսագումարների կամ մայր գումարի մարմանը և այլն) կամ,

բ. Սպառողը (վճարում իրականացնողը) տվյալ պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարումը չի կատարել:

3) Բանկը և/կամ Լիզինգը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարումը (մարումը) իրականացնում է Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից վճարվող գումարի չափով նվազեցնելով վարկի մայր գումարը, համամասնորեն նվազեցնելով կրեդիտավորման ընդհանուր

ծախսի մեջ մտնող Բանկի և/կամ Լիզինգի եկամուտը ձևավորող վճարները, եթե Սպառողը (վճարում իրականացնողը) վճարման այլ հանձնարարական չի տվել:

4) Այն դեպքում, երբ Սպառողը (վճարում իրականացնողը) իրականացնում է ժամանակացույցով նախատեսված օրը վարկի հերթական մարում և ժամկետանց պարտավորության մարում կամ դրանցից մեկը և վճարման գումարը գերազանցում է հերթական մարման կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը, ապա հերթական մարման վճարը կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը գերազանցող գումարը դիտարկվում է որպես պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում) և վճարման օրը նվազեցվում է վարկի մայր գումարից: Վճարման օրը համամասնորեն նվազեցվում է կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի և/կամ Լիզինգի եկամուտը ձևավորող վճարները: Բացառությամբ այն դեպքերի, երբ Սպառողը (վճարում իրականացնողը) տվել է վճարվող գումարի վերաբերյալ այլ հանձնարարական. օրինակ՝ ուղղել հերթական 2 ամիսների տոկոսագումարների և/կամ մայր գումարի մարմանը և այլն:

5) Այն դեպքում, երբ Սպառողը (վճարում իրականացնողը) պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրականացնում է ժամկետից շուտ Բանկի և/կամ Լիզինգի գործունեության վայրում, ապա սպասարկող աշխատակիցը Սպառողին (վճարում իրականացնողին) գրավոր կամ բանավոր ձևով տեղեկացնում է այն մասին, որ.

ա. եթե Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից այլ հանձնարարական չի տրվում, ապա պարտավորությունների ժամկետից շուտ կատարված (մարված) վճարումը ուղղվելու է վարկի մայր գումարի մարմանը, համամասնորեն նվազեցվելու է կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի և/կամ Լիզինգի եկամուտը ձևավորող վճարները և վճարված գումարի չափով փոփոխվելու է վարկի մարման ժամանակացույցը,

բ. հերթական վճարման իրականացման ամսաթվի և գումարի մասին, ինչպես նաև տեղեկացնում է մարման նոր ժամանակացույցի տրամադրման վերաբերյալ Կանոնների 7.10 կետով սահմանված գործողությունների մասին:

6) Այն դեպքում, երբ Սպառողը (վճարում իրականացնողը) իրականացնում է վարկի հերթական մարում և ժամկետանց պարտավորության մարում կամ դրանցից մեկը և նախատեսված վճարումը գերազանցում է հերթական մարման գումարը կամ ժամկետանց պարտավորության գումարի չափը, ապա Սպառողին (վճարում իրականացնողին) բանավոր ձևով տեղեկացվում է նաև, որ ավել կատարված գումարները դիտարկվում են պարտավորությունների ժամկետից շուտ կատարում (մարում)՝ նվազեցնելով վարկի մայր գումարը և համամասնորեն՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի և/կամ Լիզինգի եկամուտը ձևավորող վճարները, եթե Սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տալիս:

9.4. Հիպոտեկային կրեդիտների դեպքում.

1) Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից պարտավորությունների մարմանն ուղղված վճարման իրականացումը, որը չի համընկնում Կրեդիտավորման պայմանագրի մարման ժամանակացույցով նախատեսված վճարման (հերթական վճարում) ամսաթվի կամ վճարման ենթակա պարտավորության գումարի չափի հետ, համարվում է վաղաժամկետ մարում միայն այն դեպքում, երբ.

ա. վաղաժամկետ մարումը Սպառողի համար չի առաջացնում տույժ, տուգանք վճարելու կամ այլ բացասական հետևանքներ կրելու պարտականություն, կամ

բ. Սպառողը (վճարում իրականացնողը) պահանջում է, որպեսզի վճարումը համարվի վաղաժամկետ մարում:

2) Բանկը, պարտավորությունների ժամկետից շուտ կատարումը (մարումը) իրականացնում է Սպառողի (վճարում իրականացնողի) կողմից վճարվող գումարի չափով նվազեցնելով վարկի մայր գումարը և համամասնորեն՝ կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Բանկի եկամուտը ձևավորող վճարները, եթե Սպառողը (վճարում իրականացնողը) այլ հրահանգ չի տալիս:

3) Այն դեպքում, երբ Սպառողը (վճարում իրականացնողը) պայմանագրով նախատեսված պարտավորություններն իրականացնում է ժամկետից շուտ Բանկի գործունեության վայրում, ապա սպասարկող աշխատակիցը Սպառողին (վճարում իրականացնողին) գրավոր կամ բանավոր ձևով տեղեկացնում է.

ա. «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Սպառողի (վճարում իրականացնողի) ընտրության իրավունքի մասին,

բ. Կանոնների 9.4 կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված գործողությունների մասին,

գ. կիրառվող տույժ, տուգանքների, տոկոսագումարների վերահաշվարկման դեպքերի և կարգի մասին, Կրեդիտի գումարի վերաներդրման արդյունքում վնասների փոխհատուցման կամ լրացուցիչ եկամուտների դեպքում՝ ապագա ծախսերի նվազեցման մասին, ինչպես նաև հնարավոր այլ հետևանքների մասին,

դ. հերթական վճարման իրականացման ամսաթվի և գումարի մասին, ինչպես նաև տեղեկացնում է Կանոնների 7.10 կետով սահմանված գործողությունների մասին:

10. ԲԱՆԿԻ, ԼԻԶԵՆԳԻ ԵՎ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

10.1. Սպառողի կողմից պայմանագիրը լուծելու մասին դիմում ներկայացնելու դեպքում Բանկը և/կամ Լիզինգը անմիջապես պետք է Սպառողին տրամադրի դիմումը ստանալու մասին հավաստում այն եղանակով, որ եղանակով ներկայացվել է դիմումը (օրինակ՝ գրավոր թղթային դիմումի դեպքում՝ գրավոր թղթային հավաստում, էլեկտրոնային դիմումի դեպքում՝ էլեկտրոնային հավաստում): Բանավոր դիմում ներկայացնելու դեպքում Բանկը և/կամ Լիզինգը Սպառողի ցանկությամբ տրամադրում է գրավոր թղթային կամ էլեկտրոնային հավաստում:

10.2. Սպառողի կողմից բանկային հաշվի պայմանագիրը լուծելու և հաշիվը փակելու դիմումին ընթացք տալը մերժելու դեպքում Բանկը պարտավոր է Սպառողին տեղեկացնել մերժման պատճառների մասին (օրինակ՝ հաշվի նկատմամբ առկա արգելանքներ) Կանոնների 10.1 կետով նշված եղանակով:

10.3. Բանկը Սպառողի կողմից բանկային հաշվի պայմանագիրը լուծելու և հաշիվը փակելու դիմումին ընթացք տալիս Կանոնների 10.1 կետով նշված եղանակով Սպառողին նվազագույնը տեղեկացնում է՝

1) առավելագույնը մեկօրյա ժամկետում հաշիվը փակելու և Սպառողի հաշվին միջոցների առկայության դեպքում այդ միջոցները Սպառողի՝ այլ հաշվին փոխանցելու կամ նրա կողմից կանխիկացնելու հնարավորության և դրա իրականացման ժամկետների մասին,

2) բանկային հաշվի պայմանագիրը լուծելու և հաշիվը փակելու դիմումը ներկայացնելու և Բանկի կողմից ընթացք տալու պահից հաշվի սպասարկումը, այդ թվում՝ սպասարկման վճարի կամ ապագային միտված որևէ այլ վճարի գանձումը դադարելու մասին:

10.4. Բանկը Կանոնների 10.1 կետով նշված եղանակով Սպառողին տեղեկացնում է նաև, որ հաշվի փակումը չի ազատում Սպառողին մինչև հաշվի փակելը ստանձնած պարտավորությունների կատարումից:

11. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենք	
«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք	
«Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենք	
«Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք	
«Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք	
«Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» Կանոնակարգ 8/05-ը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի 28.07.2009թ. թիվ 229-Ն որոշում	
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներ	
Ի՞նչ անել, եթե բողոք ունեք	eFO 81-00-11

Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ	
Գյուղատնտեսական վարկի/վարկային գծի էական պայմանների անհատական թերթիկ	
Վարկային գծի (օվերդրաֆտի) էական պայմանների անհատական թերթիկ	
Վարկի մերժման գրություն	eFO 76-20-01
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ կողմից իրականացվող գործառնությունների սակագներ	
Ի՞նչ անել, եթե բողոք ունեք	eFO 22-06-01
Սպառողական լիզինգի էական պայմանների անհատական թերթիկ	
Գյուղատնտեսական լիզինգի էական պայմանների անհատական թերթիկ	
Լիզինգի մերժման գրություն	eFO 10-08-01